

## Երաժշտության հոգեբանական ազդեցությունը անձի վրա

«Երաժշտությունը ֆենոմենալ երևույթ է: Նրա փոխհարաբերությունները մարդու հետ զարմանալի են: Մեղեդային հնչյունները հրաշքներ են գործում: Մարդու մեջ արթնանում է հոգին, փոխվում է հոգեվիճակը, տրամադրությունը: Երաժշտությունն ազդում է մեր էմոցիաների վրա, իսկ էմոցիաները, պարզվում է, որ նույնիսկ կարող են հաղթահարել ֆիզիկական ցավը»:\* Երբ փորձում ես երաժշտության մասին որևէ տվյալներ փնտրել, միշտ և ամենուր հանդիպում ես նմանատիպ նկարագրության: Հնագույն իմաստուններն ասում էին՝ «Երաժշտության առաջին հնչյունը ծնվել է աշխարհի արարման հետ միաժամանակ»:\*\* Ուզբեկ գիտնական Միզակարիմ Նորբեկովն ասում է. «Առողջությունը կախված է մարդու օրգանիզմի էմոցիոնալ կենտրոնից»: Նա ընդգծում է՝ «Քառսն աշխարհում չէ, այն մեր ներսում է, և հենց երաժշտությունն է, որ հաղթահարում է այդ քառսը»: Արիստոտելը նույնպես գտնում էր, որ երաժշտության միջոցով հնարավոր է ազդել անձի ձևավորման վրա: Իսկ Պյութագորասը պրակտիկորեն էր կիրառում երաժշտության ազդեցությունը: Նա մաթեմատիկայի իր պարապմունքներն անց էր կացնում հենց երաժշտության ուղեկցությամբ, քանզի համոզված էր, որ վերջինս դրական է ազդում ինտելեկտի վրա: Հին հույների համար ևս երաժշտությունը դաստիարակության յուրահատուկ մեթոդ էր: Այն օգնում և թեթևացնում էր կյանքը, ակտիվացնում նրանց ռազմական պարապմունքների ու մրցումների ժամանակ: Մենք գիտենք, որ երաժշտությունը մեզ վրա ազդում է արտաքին աշխարհից, իսկ ի՞նչ կարելի է ասել մեր ներսից դուրս եկող երաժշտության մասին: Այս առումով կարևոր են 20-րդ դարասկզբի հնդիկ երաժիշտ Հազրաթ Ինայատ Խանի ուսումնասիրությունները: Վերջինս իր «Հնչյունների միատիկա» գրքում բացահայտում է երաժշտության՝ մարդու վրա թողած հոգեբանական և վերականգնողական ազդեցությունը: Նա պնդում է՝ «Չկա հոգու կատարելության հասնելու ավելի լավ միջոց, քան երաժշտությունը»: Միննույն ժամանակ նա հայտնում է իր մտահոգությունը. «Երբ մենք ուսումնասիրում ենք ժամանակակից կյանքը, ապա, չնայած գիտության մեջ առկա հսկայական պրոգրեսին, հայտնաբերում ենք, որ երաժշտության հոգեբանական ազդեցության ասպեկտներն այդքան էլ զարգացած չեն մեզանում, հակառակը՝ այն հետզարգացում է ապրում: Եթե փորձենք հասկանալ, թե ո՞րն է դրա պատճառը, ապա պատասխանը միանշանակ կլինի մարդկանց

մեխանիկական առաջընթացը, որն էլ հենց խանգարում է անձի անհատական առաջընթացին»: Հնդիկ երաժիշտն իր գրքում անդրադառնում է նաև երաժշտություն ստեղծողներին. «Ներկայիս արտիստներին ավելի շատ անհանգստացնում է այն, թե ինչ է սիրում լսել աուդիտորիան: Երբ երաժշտությունը դառնում է կոմերցիոն, կորցնում է իր գեղեցկությունն ու անձի վրա ազդելու ուժն ու կարողությունը»: Հնագույն աշխարհի գիտնականների տեսության համաձայն, երաժշտություն ունի դրսևորման երեք ձև՝ երգեցողություն, որևէ երաժշտական գործիքի նվագակցություն, պար: Հավանաբար կհարցնեք. «Այս երեքից ո՞րն է առավելապես ազդում մարդու հոգևոր դաստիարակության վրա»: Ինայստ Խանը տալիս է նաև սրա պատասխանը. «Երգեցողության ուժն ավելի կախարդիչ է, որովհետև այն կենդանի է: Երգի մեջ կա ձայն: Ձայնը ինքը կյանք է»: Նա գտնում է, որ ամեն ինչի հիմքում կյանքն է, իսկ կյանքի հիմքում ընկած է շնչառությունը: Իսկ ի՞նչ է ձայնը, հնչյունը, եթե ոչ շնչառության արտաքին դրսևորում: Դժվար չէ հասկանալ, որ մի ձայնը տարբերվում է մյուսից, որ ձայնն ունի հոգեբանական արժեք, և որ ամեն ձայն ունի ազդեցության յուրահատուկ ուժ, որոնք էլ առավելապես դրսևորվում են խոսակցության ու հատկապես՝ երգերի մեջ: Երաժշտությունը, երգը կարող է ազդել ու բուժել, եթե դրա մեջ կյանք կա:

